

2976

Եզրի պիտույ-ն

Գրքերի և փայտի խնամքի մասին

542

88
Ե-73

Շուշի
1899

~~88-5~~
35-58

Երեւան

ՀԱՅԵՆԱՍԻՐ ԻՓԻՏԻԻՍ

2003

88
6-73

2011

5711

88

6-73

✓

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

ԻՖԻԳԷՆԻԱ



Ռուս. Ա. Բարովիչյան:



Հ Ո Ւ Ղ Ի

Տպարան Ա. Մ. Մանտուի-Յակոբեանցի

Типография А. М. Мугдусианова.

1899

889
9r

905-ԱԲ

905

Дозволено цензурою. Тифлисъ 2 Марта 1899 года.

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Է Ր Ի Փ Ի Գ Է Ն Ի Ա Ն

Ա Ի Լ Ի Գ Ա Տ Ո Ի Մ

Ազամեմնոն թագաւորն Աւլիդա քաղաքումն էր: Յուկաց զօրքը, Տրոյալի դէմ կռիւ մղելու համար, հաւաքուել էր թագաւորի մօտ: Կէս գիշեր էր, բայց անչափ հոգսերն ու մտածմունքները չէին թողնում Ազամեմնոնին հանգիստ քնել: Նա ճրագակալի մօտ նստած՝ եղենեայ տախտակի կտորի վրանամակ էր գրում: Ըստ երևոյթին սաստիկ յուզուած դրութեան մէջ էր, որովհետեւ դրած նամակը կամ ջնջում էր և նորից գրում, կամ նամակը կրնքում էր և կրկին փչացնում: Նա մինչև այն աստիճան լարուած դրութեան մէջ էր, որ նամակ գ ելու ժամանակ այտերիցն արասուքի կաթիլներ էին գլորւում: Վերջապէս կանչեց ծեր սպասաւորին և ասաց.

— Ծերսկ, դու գիտես որ նախագուշակող Կալքաս քրմապետը սլահանջում է, որ դուստրս զո-

հեմ Անահիտ դիցուհուն: Նա ասում է, երբ որ աղջիկդ կըզոհես, միայն այն ժամանակ զօրքն անվտանգ կը հասնէ Տրոյա, և կառնէ ու կ'աւերէ քաղաքը: Այս խօսքերը լսելուն պէս Տայլֆիբիային հրամայեցի, որ բոլոր զօրականներին առաջարկէ ցրուել իրանց տները, որովհետև նրա պահանջը չէի կարող կատարել: Բայց յետոյ համաձայնուեցայ, որովհետև եղբայրս ինձ սաստիկ նախատեց: Լսիր. կնոջս նամակ էի գրել, որ դուստրս այստեղ ուղարկէ, որովհետև ցանկանում էի Աքիլլէսի հետ ամուսնացնել, և նամակում գրել էի, որ Աքիլլէսը չէ ուզում մեզ հետ գնալ Տրոյա մինչև որ Իֆիգէնիայի հետ չ'ամուսնանայ: Բայց այժմ միտքս փոխել եմ և մի ուրիշ նամակ եմ գրել հետևեալ բովանդակութեամբ. «Իֆիգէնիային Աուլիս չուղարկես: Նրա պսակն Աքիլլէսի հետ՝ յետաձգել եմ»:

— Տէր, չէ որ Աքիլլէսը կըչարանայ, երբ իմանայ որ դուք ուզում էք նրան խաբել, ասաց ծերուկը:

— Ո՛չ. նա այդ մասին բոլորովին տեղեկութիւն չունի: Դէ շտապիր. ոչ մի տեղ չըհանգստանաս, վազելով հասիր այնտեղ. բայց զգաստ եղիր, որ կինս և դուստրս մօտովդ անցնելու ժամանակ նկատես. նոյնպէս զգուշացիր, որ նամակի գրոշմը չըփչացնես:

Ծերուկը նամակը ստանալուն պէս՝ ճանապարհ ընկաւ: Բայց հէնց որ վրանից մի քիչ հեռացաւ,

Մենելաուսը*) հասաւ ծերուկին, ուժով նամակը ձեռից առաւ և կնքադրոշմը կտարեց: Ծերուկն այդ ժամանակ հարնչ կանչեց:

Ագամեմնոնը ծերուկի աղաղակը լսելուն պէս՝ վրանից դուրս վազեց:

— Այս թնչ աղմուկ է, հարցրեց Ագամեմնոնը:

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես ձեռիս նամակը, ասաց Մենելաուսը:

— Տեսնում եմ. դա իմ նամակն է, տո՛ւր ինձ:

— Մինչև որ նամակդ ամբողջ յունաց զօրքի առաջ չկարդամ՝ չեմ ասլ:

— Աստ խնդրեմ, թնչ գործ ունես նամակիս հետ: Մի՛թէ ես իրաւունք չունեմ տանս մէջ կարգադրութիւն անել: Մի աստ տեսնեմ թնչ իրաւունքով ես ուրիշի գործերի մէջ խառնուում:

— Եղբայր, ասաց Մենելաուսը, խօսք տալ և չըկատարել՝ դա յանցանք է: Նախքան զօրավար ընտրուելդ, դու ամենքին սիրով ընդունում էիր, բոլորի ձեռները յարգանքով սեղմում էիր: Ապարանքիդ դռները բոլորի առաջ բաց էր: Բայց յետոյ ուխտդ դրժեցիր, կարծելով իշխանութիւնդ կ'կորցնես և փառքից կզրկուես: Մի՛թէ Կալքաս քրմայետի խօսքերը չըլսեցիր և չըլսոտացար դուստրդ զոհել. մի՛թէ նրա յետևից մարդ չ'ուղարկեցիր, որ

*) Ագամեմնոն թագաւորի եղբայրը:

գայ Աքիլլէսի հետ պսակուի: Ո՛հ, այս բոլորը Յու-
նաստանի համար սև օր է գուշակոււմ և քո ուրա-
ցութիւնը մեծ ցաւ ու վիշտ կը պատճառէ հայ-
րենիքիդ:

— Ինչո՞ւ համար ես նախատում ինձ: Ի՞նչ հի-
ման վրայ քեզ թող ես աալիս այգպիսի խօսքեր
ասել, քանի որ դու չըկարողացար սեպհական կնոջդ
հպատակացնել քեզ*): Իսկ այժմ պատիւ և ազնու-
թիւն ես համարում նրան վերագարձնել: Դու ան-
պատիւ խօսքեր ասացիր ինձ նրա համար, որ չար
միտքս դէպի լաւն եմ փոխել: Ի՞նչու համար պիտի
գուստրս զոհեմ և ինձ անսահման ցաւի ու վշտի
մատնեմ. միայն նրա համար, որ դու կնոջդ վրէժն
առնես:

Մենեւաւոսը բարկացած՝ եղբօրից երեսը շրջեց
և ասաց.

— Ուրեմն դու այլ ևս իմ եղբայր չես կարող
կոչուել. գնամ ուրիշ եղբայր որոնեմ:

Հէնց այս խօսակցութեան ժամանակ մի լրա-
բեր եկաւ ո՛ւ ասաց.

— Տէր արքայ. ձերդ պայծառափայլութեան
համաձայն Իֆիգէնիան և իր մայր Կլիտեմնեստրան
իր Սրէստ որդու հետ եկել են և մօտակայ աղբիւրի

*) Մենեւաւոսի կինը, գեղեցիկ Հելինէն էր, որ թողց իր ա-
մուսնուն՝ և Պարիսի հետ Տրոյա փոխաւ: Նրա վերագարձնելու համար
Տրոյայի պատերազմը սկսաւ:

մօտ հանգստանում են. որովհետև ճանապարհը թէ
երկար և թէ դժուարին էր: Թագուհուն և արքայ-
աղստրին ողջոյն տալու համար բոլոր յունաց զօրքը
հաւաքուել է այնտեղ: Նրանք հարցնում են թէ
ի՞նչու է արքայադուստրն եկել. արգեօք թագաւորը
կամենում է նրան ամուսնացնել, թէ միայն տես-
նելու համար է բերել տուել:

Ագամեմնոնը այս համբաւը լսելուն պէս շփոթ-
ուեց:

— Վայ ինձ: Կնոջս ի՞նչ պատասխան պիտի տամ.
չէ որ իր դստեր պսակադրութեան հանդիսին ներ-
կայ լինելու համար է եկել: Արգեօք նա ինձ ի՞նչ
կ'ասէ, երբ միտքս իմանայ: Ի՞նչ պիտի ասեմ աղջ-
կանս: Թշուառ աղջիկ: Փոխանակ հարսնացու լի-
նելու, մահն է սպասում քեզ: Ոչ թէ Աքիլլէսը
պիտի գրկէ քեզ, այլ մահը: Ո՛հ լաւ է մեռնել,
քան տեսնել այն տեսարանը, երբ սեղանի առաջ
բերելու ժամանակ աղջիկս պիտի աչքերն ուղղէ
դէպի ինձ և ասէ. «Հայրի՛կ, սպանել ես ուզում
ի՞նձ»: Անիծեալ Պարիս, այս բոլոր թշուառութեան
պատճառը դու ես:

Քիչ լուութիւնից յետոյ, Մենեւաւոսն իր խօս-
քերից մի կերպ փոշմանած, եղբօրն ասաց. — Ես չեմ
կամենում, որ աղջիկդ կնոջս համար զոհես: Ոչ,
թող նա ապրի: Խնդրեմ արձակել զօրականներին,
որ այս անարդարութեան վճիռը չըկայանայ:

— Զէ որ ամբողջ բանակն է պահանջում, որ դուստրս զոհեմ:

— Բայց եթէ աղջիկդ Արզոս քաղաքն ուղարկես, այն ժամանակ այս բանը չի իրագործուիլ, ասաց Սենեկաւոսը:

— Ի՞նչ օգուտ: Այն ժամանակ Կալքաս քրմապետն այդ գէպքն ամեն տեղ կը տարածէ և Ոգիսևսը կասէ թէ իր տուած խօսքից յետ է կանգնել: Եթէ աղջկանս Արզոս ուղարկելով մահից ազատեմ, գիտե՞ս վերջն ինչ կըլինի. իշխաններն իրանց գընդերով իմ ետևից կը վազեն, արքայական ոստանիս պատերը կ'քանդեն, կ'աւերեն ամբողջ երկիրս: Զէ, եղբայր, ծանր է վիճակս: Դուստրս կորած է. մնում է մեզ միայն այնպէս անել, որ առժամանակ մայրն ոչինչ չիմանայ:

Մինչ այս մինչ այն, թագուհին իր դստեր հետ կառքով եկաւ և Ագամեմնոնի վրանի առաջ կանգնեց: Թագուհին կառքից ցած իջաւ. ծառաներին պատուիրեց, որ բերեն այն արկղները, որոնց մէջ դարսած էին օրիորդի թանգագին զարդարանքները: Իֆիգէնիան հօրը տեսնելուն պէս վզովը փաթաթուեց և ասաց.

— Անչափ շնորհակալ եմ, որ այդքան բարի էք ինձ համար. ուրախ եմ, որ յետևիցս մարդ էք ուղարկել:

Թագաւորն ոչինչ չը պատասխանեց. միայն երև-

սը մի կողմ դարձնելով՝ աչքերիցն յորդառատ արտասուք թափեց:

— Հայրիկ, երևի իմ այստեղ գալը քեզ ուրախութիւն չէ պատճառում:

Ագամեմնոնը սրտի վիշտը մի կերպ ճնշելով, ասաց.

— Զօրքի առաջնորդող մարդն այնքան վըշտերով ու հոգսերով է ծանրաբեռնուած լինում, որ հազիւ թէ նա կարողանայ ուրախանալ:

— Աղաչում եմ, առժամանակ մի կողմը թողէք ձեր վշտերն ու ցաւերն և ուրախացէք ինձ հետ:

— Անսահման ուրախ եմ քեզ տեսնելով:

— Ուրախ ես. բայց ինչու ես լաց լինում:

— Ողբում եմ նրա համար, որ երկար ժամանակով քեզանից պիտի բաժանուեմ:

— Մի՛թէ:

— Այո՛, քեզ էլ նոյնպէս վիճակուած է ճանապարհորդել:

— Մենակ թէ՛ մօրս հետ:

— Մէն-մենակ. ո՛չ հայրդ, ո՛չ մայրդ չէ կարող ընկերակից լինել:

— Հայրիկ, աստ խնդրեմ ապրելու համար ես ուղարկում ինձ:

— Սիրելիս, հարկաւոր չէ այդպիսի հարցմունքներ անել:

— Շատ լաւ, միայն աղաչում եմ, հայր, երբ

տրոյացիները հետ գործդ վերջացնես, իսկոյն վերագարձիր:

— Բայց մինչև պատերազմ սկսելը՝ պիտի ասուուածներին զոհ մատուցանել:

— Այն, անշուշտ հարկաւոր է աստուածներին յարգանք ցոյց տալ և նրանց կամքն հարցնել:

— Գիտես, որ դու էլ պէտք է զոհերի շարքում կանգնես:

— Որպէս զի պարը կառավարեմ:

— Ո՛հ, զաւակս, սրբան բախտաւոր ես, որ գլխիդ գալիքի մասին ոչինչ չըզիտես: Իհ, այժմ կարող ես վրանը գնալ. բայց նախ և առաջ եկ համբուրուենք, որովհետեւ երկար ժամանակով իրարից պիտի բաժանուենք:

Երբ Իֆիգէնիան մաւա վրանը, հայրը նրա ետևից բացականչեց. «Ո՛հ թշուառ աղջիկ, այլ ևս քո արծաթի կուրծքդ, լուսնեակ երեսդ, փայլուն աչերդ և շողշողուն մագերդ չեմ տեսնելու: Անիծուես դու, Պրեամոս, այս բոլոր դժբախտութեան պատճառը դու ես:

Յետոյ նա դառնալով դէպի կինը, ներողութիւն խնդրեց, որ փոխանակ ուրախանալու, տխրում է: Կլիտեմնեստրայի այն հարցմունքներին, թէ հարսանիքն երբ և ո՞րտեղ է լինելու, նա պատասխանեց, թէ հարսանիքն եկող ամսում կլրինի և այնտեղ, ուր ապրում է Աքիլէսը, այսինքն բանակում:

— Դուք հանգիստ եղէք, հարսանիքի ամեն պատրաստութիւնը ես կըհոգամ, միայն դուք պէտք է վերագառնաք Արգոս քաղաքը:

— Բայց անշուշտ հարկաւոր է, որ մայրն աղջկայ պսակադրութեան հանգիսին ներկայ գտնուի:

— Իսկ նաժիշտներին և ծառաներին տանը մենակ չէ կարելի թողնել:

— Ես ամեն բան կարգադրել եմ, հանգիստ եղէք, — ասաց թագուհին և ներս մտաւ վրանը, իսկ Ագամեմնոնը դնաց Կալքասի մօտ իր ցաւի համար ճար հարցնելու:

Այդ միջոցին թագաւորի վրանի առաջ երևաց շողշողուն զէնքերով սպառազինուած դիւցազն Աքիլէսը: Նա եկել էր, որ թագաւորին յայտնէ, թէ զօրքերն այլ ևս չեն համբերում և ցանկանում են իրանց տները ցրուել, եթէ շուտով բանակը դէպի Տրոյա չշարժուի:

Կլիտեմնեստրան հէնց որ իմացաւ, թէ եկողն Աքիլէսն է, ծառային ուղարկեց Ագամեմնոնին կանչելու, իսկ ինքն ուրախ դէմքով դուրս եկաւ և իր ամուսնու ընտրած փեսան համարելով, երիտասարդին սիրով ձեռ տուաւ և շնորհաւորեց առաջիկայ պսակը:

Բայց Աքիլէսը մնացել էր շուտրած ու ասլաճ և չըզիտէր թէ ինչ պատասխանէ:

— Ինչո՞ւ ես ամաչում, չէ որ աղջկանս հետ

շուտով պիտի ամուսնանաս:

— Ոչինչ չեմ հասկանում ձեր խօսքերից և իմ ամօթից մնացել եմ շուտարած:

— Առհասարակ երիտասարդներն երբ առաջին անգամ զոնքանչի հետ խօսում են պսակադրութեան մասին, նրանք շփոթւում են:

— Բայց երբէք ձեր աղջկայ հետ ամուսնանալու համար ցանկութիւն չեմ յայտնել: Եւ Ատրէոս իշխանի որդիքն*) այդ մասին ինձ հետ ոչինչ չեն խօսել:

Թագուհին մնաց զարմացած: Երբ Աքիլէսը զայրացած ուզում էր գնալ Ագամեմնոնի մօտ իր անձի հետ կապուած խաբէութեան պատճառն իմանալու, նրան կանգնեցրեց այն ծերուկ ծառան, որին թագաւորն երկրորդ նամակն յանձնել էր տանելու: Ծերուկը լիայոյս լինելով, որ ոչ մի վտանգ չի առաջանալ, բացաւ Ագամեմնոնի բոլոր խորհուրդները:

Այն ժամանակ թագուհին Աքիլէսի ոտներն ընկնելով՝ ասաց.

— Ո՛վ, ծովի սիրուն դիցուհու որդի, քեզ եմ դիմում, ազատիր աղջկանս. թէև նա կեղծ կերպով է քո հարսն կոչուած, բայց և այնպէս քեզ համար եմ բերել այստեղ: Մթթէ թոյլ կրտաս, որ քո անունով նենգութեամբ որսած աղջիկը

*) Այսինքն Ագամեմնոնը և Մենելաոսը:

զոհուի արիւնաթաթախ սեղանի վրայ: Բացի քեզանից, ոչ ոք չունիմ պաշտպան:

Աքիլէսը թագուհուն գետնից բարձրացրեց և ասաց.

— Ես արդարութիւն սիրող մարդ եմ, և եթէ Ատրէոս իշխանի որդիքը ճշմարտութեան սկզբունքով են առաջնորդուում, այն ժամանակ կըհպատակուեմ նրանց: Հաստատ իմացիր, ո՛վ թագուհի, որ իմ բազուկները քեզ կըպաշտպանեն: Իսկ Թէդիս դիցուհի որդին չեմ կոչուիլ, եթէ այգպիսի անասելի բան կատարուի: Ո՛չ, միամիտ եղիր, ո՛վ տիրուհի, այս սուրբ ոչ ոքին չի թողնիլ, որ օրիորդին իմ ձեռից առնեն:

Աքիլէսը հեռացաւ թագուհու մօտից: Այդ միջոցին Ագամեմնոնը Կալքասի մօտից վերադառնալով, մտաւ վրանը և յայտնեց, թէ պսակադրութեան բոլոր պարագաները պատրաստ են: Ուստի թող Իֆիգէսիան ինձ հետ գայ, որ պսակադրութեան կարգը կատարենք. (թագաւորը չըգիտէր, որ թագուհուն ամեն ինչ յայտնի է):

Այն ժամանակ թագուհին հարցրեց ամուսնուն.

— Ասա՛ խնդրեմ, փառք ես համարում, որ մի անառակ կնոջ համար հարազատ զաւակդ զոհուեմ ես: Ուրեմն նրա մահովն ես ուզում սրբել եղբորդ հասած նախատինքը: Երևակայիր այն անսահման ցաւը, որ պիտի զգամ, երբ տուն վերադարձած ժա-

մանակ դստերս տանը չըզտնեմ: Աստ խնդրեմ, թնչ-
 պէս պիտի աղօթես աստուածներին, կամ ես ինքս
 թնչ սրտով պիտի աղօթեմ քեզ համար: Ես կաց,
 ի սէր արդարութեան, այդ եղեռնական ձեռնարկից
 և թող ապրի սիրելի զաւակդ:

Ազամեմնոնը շփոթութիւնից չըզիտէր ինչ պա-
 տասխանէր և դեռ բերանից մի խօսք չըհանած՝
 Իֆիգէնիան իր փոքրիկ Օրէստ եղբօր ձեռնից բռն-
 նած՝ առաջ եկաւ և ընկնելով հօր գիրկն ասաց.

— Ոհ եթէ ես կարողանայի, Որփէոսի նման,
 ձայնովս քարեր կակղացնել, այն ժամանակ կըփոր-
 ձէի մտադրութիւնդ և նպատակդ փոխել: Բայց
 թշուառս արտասունքից աւելի ոչինչ չունեմ, որ
 ինձ համար խօսեն:

Հայրիկ, ես քո զաւակն եմ, ժամանակից առաջ
 մի խաւարեցնէր կեանքիս արևը: Ես դեռ ցանկա-
 նում եմ ապրել: Յիշիր, թէ ինչպէս մանկութեանս
 ժամանակ, փարւում էի ծունկերիդ և դու ինձ ինչ-
 պէս գրկում էիր, երբ առաջին անգամ «հայրիկ»
 էի անուանում և դու «զաւակ» էիր կոչում ինձ: Դու
 ասում էիր ինձ, թէ երբ կըլինի, որ տեսնէի
 քեզ երջանիկ կին, մի նշանաւոր մարդու գնացած:
 Իսկ ես մտածում էի, թէ ինչպէս կընդունէի կը-
 պատուէի ձերուսի հօրս իմ սեփական տան մէջ:
 Իսկ այժմ ցանկանում ես մահուան մատնել զաւա-
 կիդ: Աղաչում եմ, ի սէր Ատրէոս իշխանի, չըկա-

տարել մտադրութիւնդ: Աղաչում եմ մօրս սիրոյն,
 որ ցաւերի մէջ կձկուել է, նրան անսահման վըշ-
 տերի և ցաւի չըմտանես. Ոհ, հայր, ի սէր Օրէս-
 տին՝ ինձ ժամանակից առաջ մի սպաներ. մահը
 սոսկալի է, քաղցր է արևի տակ ապրելը:

Հաւատո՛ս ինձ, որ սիրում եմ քեզ, ո՛վ իմ զա-
 ւակս, ասաց Ազամեմնոնը: Բայց և այնպէս պէտք
 է կամայ թէ ակամայ կատարել այն ինչ որ քեզ
 յայտնի է: Անհրաժեշտ հարկաւորէ Տրոյացոց պատ-
 ժել, որ միւս անգամ չըհամարձակուեն յոյն կա-
 նանց պատուին դիպչել: Եթէ դու չըզոհուես, այն
 ժամանակ մենք բոլորս կորած ենք: Չըկարծես թէ
 Հելինէի և Մենելաոսի համար ես զոհուում, ո՛չ, այլ
 ամբողջ Յունաստանի, քո հայրենիքի համար, որի
 հօղն ու ջուրը քեզ պահել ու մեծացրել է:

Այդ խօսակցութեան ժամանակ Ա.քիլլէսն եկաւ
 և ցաւալի հառաչանքով յայտնեց, թէ բանակն ու-
 ժով պահանջում է, որ օրիորդը զոհուի: Երբ փոր-
 ձում էի, որ նրանց դիտաւորութիւնը փոխեմ, այն
 ժամանակ քիչ էր մնում, որ բանակում ինձ քար-
 կոծէին:

— Դժբանգ դստրիկ, այլ ևս յոյս չըկայ, որ
 դու կենդանի մնաս, ասաց թագուհին: Ամբօխը
 բազմութիւն է և Ա.քիլլէսը չէ կարող հազարների
 դէմ կռուել: Աստ խնդրեմ, ո՛վ պատանի, այժմ իսկ
 գա՛լիս են զաւակս յափշտակելու:

—Օրիորդի վարսերից բռնելով՝ սեղանի մօտ կրտանեմ, պատասխանեց Ա. քիլլէսը. բայց հաւատա ինձ, թոյլ չեմ տալ, որ նրանք անեն այն՝ ինչ որ կամենում են: Քանի որ ես կենդանի եմ և այս սուրբ ինձ հետ է, թոյլ չեմ տալ որ մատի ծայրով անգամ գիպչեն աղջկանդ:

Օրիորդն այդ խօսքերը լսելով՝ գլուխը մօր կրգից վերցրեց և դիւցազնի վրայ նայելով մօրն ասաց:

—Մայրիկ, ինձ լսիր. այժմ պարզ է, որ զուր էիր բարկանում հօրս վրայ. այն, ինչ որ Աստուածանից որոշուած է՝ մենք չենք կարող շրջել: Գովելի են մեր բարեկամի ձգտումները, որ ուզում է իր սրով պաշտպանել ինձ, բայց պէտք է մտածել, որ նրա մահուան պատճառ չըդառնանք: Ես վճռել եմ մեռնել: Այս բոսպէիս յունաց բանակը վրաս է նայում, և արշաւանքի ճակատագիրն իմ կեանքից կամ մահից է կախուած: Մայրիկ, դու ծնել ես ինձ ոչ թէ միայն քեզ համար, այլ ամբողջ ազգի համար. թող ես զոհուեմ, միայն իմ հայրենակիցները Տրոյան առնեն: Ապաղայում ո՛չ մի օտարական չի յանդգնիլ մեր երկրից կին փախցնել և իմ անունս յաւիտեան ժողովուրդն օրհնելով կրօնիչէ: Երբ որ այսքան զօրականներ ոտքի կանգնած սրերը մերկացրած վրէժ են խնդրում թշնամուց, միթէ ինձ համար ամօթ չէ, որ արգելք լինեմ ամեքին և հայրենիքիս դժբաղդութեան պատճառ դառնամ:



Ո՛չ, թող զոհուեմ հայրենիքիս սրբութեան օգտին: Ինձ զոհեցէք և թշնամուն յաղթեցէք:

—Ես մահկանացուների մէջ ամենաերջանիկն կրլինէի, ասաց Ա. քիլլէսն, եթէ աստուածները քեզ պէս մի կին պարզեէին ինձ: Ես հոգուս չափ սիրում եմ քեզ, տեսնելով քո այդ վեհ հոգին և բարձր ձգտումները: Եթէ դուք կը համաձայնուէք ինձ հետ, այս բոսպէիս կըվերցնեմ քեզ և իմացիր, որ եթէ ամբողջ յոյները քո մահը ցանկանան՝ իմ այս բազուկները կազատեն քեզ:

Բայց Իֆիգէնիան պատասխանեց.

—Ես չեմ ցանկանում, որ մի ուրիշը իմ պատճառով մեռնի, իմ տենչանքն է որ մահով հայրենիքս ազատեմ:

Ա. քիլլէսը զարմացաւ օրիորդի դիւցազնական վեհութեան վրայ և ասաց.

—Ես ոչինչ չեմ կարող անել քո վճռի դէմ: Սակայն, մի բան եմ ուզում ասել. զօրականների հետ սեղանի մօտ ես կըկանդնեմ, հէնց որ սուրբ վզիդ մօտենայ և դու՛ իմ օգնութեան կարօտ լինես, նշան տուր ինձ:

Վերջապէս Իֆիգէնիան հրաժեշտ առաւ իր մօրից և խնդրեց, որ իր մահուան պատճառով սուգ չանէ: Յետոյ պատուիրեց, որ իրան տանեն սեղանի առաջ: Երբ նա հասաւ նուիրական անտառի ծաղկաւէտ տեղը, յունաց բոլոր զօրքը նրա առաջ դուրս

188
1001

եկաւ: Ագամեմոնոնը տեսնելով, որ աղջիկն անկախ
և ուրախ սրտով գնում է դէպի զոհի սեղանը, երեսը
ծածկեց և սկսեց լալ, որպէս զի իր աղջկայ մահը չը-
տեսնի: Բայց Իֆիգէնիան, երբ հայրը մօտեցաւ, ասաց.

— Հայրիկ, մի սգար իմ պատճառով, ես սի-
րով անձս զոհում եմ այն հայրենիքին, որ տէր է
իմ մարմնիս և սրտիս: Ես ուրախ սրտով զոհում
եմ իմ հայրենիքի շահերին. աղաչում եմ աստուած-
ներին, որ ներկայ պատերազմում շնորհէ ձեզ յաջո-
ղութիւն, որ յաղթանակով վերադառնաք: Այժմ
թող ոչ ոք ինձ արգելք չըլինի ես յօժար սրտով
պարանոցս դնում եմ սրի տակ:

Բոլոր մարդիկ զարմանալով նայում էին հայ-
րենիքի սիրոյ համար զոհւող օրիորդի վրայ: Հրա-
պարակի վրայ տիրեց խորին լուռութիւն: Կալքասն
առաջ եկաւ, սուրը պատեանից հանեց և դրաւ սե-
ղանի վրայ: Յետոյ օրիորդի գլուխը թարմ ծաղիկ-
ներով պսակեց: Բոլոր զօրքը լուռ նայում էր այդ
տխուր հանդէսին:

Ահա քրմապետի սուրը շողշողաց օրիորդի վզի
վրայ: Սակայն մի հնարով օրիորդը հանդիսական-
ների աչքից անյայտացաւ: Ոչ ոք չիմացաւ թէ ո՞ր-
տեղ նա թազնուեցաւ: Անահիտ դիցուհին կոյսի
վեհանձնութիւնը տեսնելով, պատեց նրան ամպով,
իսկ սեղանի վրայ օրիորդի փոխարէն ընկած էր
արիւնով թաթախուած մի եղնիկ:

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Բ Ի Փ Ի Գ Է Ն Ի Ա Ն

Տ Ա Ի Բ Ի Գ Ո Ի Մ

Որովհետև Ագամեմոնն թագաւորն որսի ժա-
մանակ Անահիտ դիցուհու սիրելի եղնիկը սպանել
էր, դրա համար դիցուհին յօյններին թոյլ չէր տա-
լիս նաւի առագաստը պարզել, մինչև որ Ագամեմ-
ոնը իր դուստր Իֆիգէնիային չըզոհէր: Երբ վեր-
ջապէս թագաւորը համաձայնուեց աղջկան զոհելու
և երբ զոհաբերութեան համար ամեն բան պատ-
րաստ էր, դիցուհին Իֆիգէնիայի մահը չուզելով
նրա փոխարէն մի եղնիկ զոհեց, իսկ օրիորդին հան-
դիսականներից ծածուկ փոխադրեց Տաւրիդ քաղաքը,
որտեղ Անահիտի տաճարն էր: Այդ երկրի Թոաս
թագաւորն այն բոլոր օտարականներին, որոնք գա-
լիս էին Տաւրիդ բռնում ու զոհ էր բերում տա-
ճարին: Բայց որովհետև ոչ ոք իր սեփական կամ-
քով չէր գալիս այդ քաղաքը, ուստի և թագաւորը
բռնում էր նրանց, որոնք ծովի ափում նաւաբեկու-
թեան վտանգին էին ենթարկուած:

Երկար ժամանակ Իֆիգէնիան այդ տաճարում
քրմապետի պաշտօն էր վարում: Նա մի անգամ տար-
օրինակ երազ տեսաւ:

Երազում տեսնում է, որ իբր թէ ինքը

Տաւրիդից հեռացել է և իր հայրենի Որդոս քաղաքումն է ապրում: Յանկարժ սաստիկ երկրաշարժից հայրական ապարանքը փուլ է գալիս, այնպէս որ միայն մի սիւն է մնում կանգնած: Սիւնի վրայ նայելու ժամանակ նրա աչքին երևում է շիկահեր մի երիտասարդ և սկսում է նրա հետ խօսել: Իֆիգէնիան ըստ իւր սովորութեան, ինչպէս մի օտարականի՝ նրան զոհաբերութեան համար պատրաստում է: Ողբալով՝ լւանում է ջրով երիտասարդին: Երբ քնից զարթնում է, նա համոզւում է, որ իր եղբայր Օրէստը վախճանուած պիտի լինի, որովհետև տան սիւնը առհասարակ որդու տեղէր ընդունուած:

Պատահեց որ նոյն իսկ այդ օրն Օրէստն իր ընկեր Պիլագի հետ նաւով եկաւ Տաւրիդ: Տաւրիդ գալու պատճառը հետեւեալն էր. այն օրուանից յետոյ, երբ Օրէստը, ի վրէժ հօր մահուան, սպանել էր հարազատ մօրը, Եւմենիդները*) սկսեցին նրան հալածել: Ապոլլոնի հրամանով նա գնաց Աթէնք, դատի ենթարկելով նրան՝ արգարացրին, բայց կրկին Եւմենիդները հալածում էին նրան: Ուստի Ապոլլոնը հրամայեց Օրէստին գնալ Տաւրիդ Անահիտ զիցուհու պատկերը Աթէնք բերելու համար, որից յետոյ կարող է ընդ միշտ ազատուել Եւմենիդների հալածանքից: Գալով Տաւրիդ, Օրէստը և Պիլատը անցեալ զօհերի արիւնով թաթախուած զոհաբերու-

*) Չար սղինիք են:

թեան սեղանը տեսան: Օրէստը երբ կամենում էր վերադառնալ, Պիլագը բռնելով նրան ասաց. ամօթ է մի անգամ սկսած գործից յետ կանգնելը: Նա խորհուրդ տուեց, նաւից հեռու՝ ծովափի մօտ եղած խոռոչներից մէկում թաղնուիլ, եթէ պատահամբ կըսկսեն իրանց որոնել. իսկ գիշերը սիւների միջանցքով նրանք ներս կըմտնեն տաճարը, զիցուհու պատկերը վերցնելով կըփախչեն:

Օրէստը համաձայնուեց և նրանք թագ կացան ծովափի մօտ եղած քարանձաւներից մէկում: Նոյն քարանձաւի մօտ հովիւներն նախիր էին արածացնում: Հովիւներից մէկը տեսնելով Օրէստին և Պիլագին՝ վազեց ընկերների մօտ ու ասաց.

«Նայեցէք թէ ո՛վքեր են այնտեղ նստած, հաւանական է, որ դրանք աստուածներ լինեն».

նա աստուածների տեղ ընդունեց նրանց նրա համար, որ երիտասարդները պարթեւհասակ և գեղեցկադէմ էին: Հովիւներից մի քանիսը սկսեցին մինչև անգամ նրանց աղօթել, իսկ մի քանիսը ծաղրելով ասացին.

— Չէ, դրանք նաւարեկութեան վտանգի ենթարկուած մարդիկ են, որոնք իմանալով այստեղի սովորութիւնը, այն է օտարականներին զօհ բերելը, թագ են կացել այնտեղ:

Բոլորը միաձայն վճռեցին, երիտասարդներին բռնեն ու տանեն տաճար զիցուհուն զոհելու:

Մինչ այս, մինչ այն՝ Օրէստը կատաղութեամբ
դուրս եկաւ խռուչից և ասաց.

— Պիլադ, միթէ չես տեսնում դժոխքի սատա-
նային, որ ուզում է ինձ կորցնել և նրան, որը դուրս
է ժայթքում կրակը և մօրս բռնած կամենում է
ինձ վրայ ձգել: Եւ նա սկսեց բառանչել ինչպէս
գոմէշ և հաջել որպէս շուն: Հովիւներն այդ բանը
տեսնելով խիստ վախեցան, բայց բոլորովին նրան-
ցից չըհեռացան, այլ մի կողմը քաշուելով՝ նստե-
ցին: Բայց երբ Օրէստը նախրի վրայ յարձակուեց ինչ-
պէս մի առիւծ և սկսեց եղներին կտորել, Հովիւ-
ները սկսեցին հարայ կանչել, փողհարել, որպէս զի
քաղաքացիները իմանան, որ իրանք վտանգի մէջ
են: Հովիւները մենակ չըհամարձակուեցան երիտա-
սարդների վրայ յարձակուել, որովհետև վերջիններս
ուժեղ և քաջասիրտ էին երևում:

Երբ հաւաքուեցան մի քանի մարդիկ, Հովիւները
սկսեցին նիզակներով և քարերով Օրէստի և Պիլադի
վրայ յարձակուել: Այդ միջոցին Օրէստի ուշքը գլու-
խը հաւաքուեց: Պիլադը զգուշութեամբ նրան պահ-
պանում էր, սրբում էր բերանից փրփուրը և աշ-
խատում էր իր հազուստով պաշտպանել նրան թըշ-
նամիների նետած սլաքներից և քարերից: Երբ վեր-
ջապէս Օրէստը բոլորովին ուշքի եկաւ և իմացաւ
թէ ինչ գրութեան մէջ են իրանք, ասաց.

— Պիլադ, մենք պիտի մեռնենք, բայց աւելի լաւ

է քաջի պէս մեռնել. հանիր սուրդ և հետեւիր ինձ:

Հովիւներից մի քանիսը կռուի ժամանակ փա-
խան, իսկ մի քանիսն էլ հեռուից սկսեցին քարեր
արձակել նրանց վրայ, բայց չըկարողացան վիրաւո-
րել նրանց: Վերջապէս Հովիւներին յաջողուեց քարեր
արձակելով Օրէստի և Պիլադի սրերը խել և նրանց
ձեռներն ու ոտները կապելով՝ տարան Թոաս թա-
գաւորի մօտ: Թագաւորը հրամայեց նրանց տանել
տաճարը, որովհետև Իֆիգէնիան նրանց հետ պիտի
վարուէր երկրի սովորութեան համաձայն:

Երիտասարդներին տաճար տարան: Պիլադի
անունն Իֆիգէնիային յայտնի էր, որովհետև Օրէստն
էր յայտնել, իսկ Օրէստի անունը ոչ ոք չըգիտէր,
Իֆիգէնիան հրամայեց, որ նրանց կապանքից ազա-
տեն, ասելով թէ այն բոլոր ընծաները, որոնք նուիր-
ւում են դիցուհուն, ազատ պիտի լինին: Յետոյ
իմանալով, որ նրանք եղբայրներ են, հարցրեց.

— Ո՞վ է ձեր հայրը և մայրը. արդեօք քոյր էլ
ունէք: Աւանդ, նա այսօր իր շնորհալի եղբայրներից
պիտի զրկուի:

Օրէստը պատասխանեց.

— Ինչո՞ւ ես մեզ վշտացնում: Այդ նրանց ասան,
որոնք պիտի մեռնեն: Մի խնայիր մեզ, մենք ար-
դէն գիտենք, թէ ձեր երկրի սովորութեան համա-
ձայն՝ ինչ է սպառնում մեզ:

— Խնդրեմ ասէք, ո՞րն է ձեզանից Պիլադը:

— Իմ ընկերս է, ասաց Օրէստը:
 — Ո՞ր քաղաքիցն էք: Հարազատ եղբայրներ էք:
 — Մենք արիւնակից եղբայրներ չենք, սակայն
 իրրւ ընկերներ, սերտ եղբայրներ ենք իրար հետ:
 — Ի՞նչ անունն ի՞նչ է:
 — Չեմ կարող ասել: Ի՞նչք իշխանութիւն ու-
 նէք մարմնիս վրայ և ոչ թէ իմ անուան:
 — Ուրեմն չէս ուզում ասել թէ որտեղացի ես:
 Երբ Օրէստն ասաց, թէ ինքն Արգոս քաղա-
 քիցն է, Իֆիգէնիան սկսեց հարցնել նրան Տրոայի,
 Հելինէի, Կալքասի, Ոգիսևսի մասին և ապա հարց-
 րեց.
 — Արգեօք Թեախի որդի Աքիլլէսը կենդանի է:
 — Նա մեռաւ և նրա հարսանիքն էլ Աւլիդա-
 յում չըկայացաւ:
 — Դա իսկական հարեանիքը չէր, ինչպէս շա-
 տերին յայտնի էր, ասաց Իֆիգէնիան:
 — Թ՛՛՛՛՛՛՛՛՛՛՛ տուր հարցնել, դու ո՞վ ես, որ այդպէս
 հետաքրքրւում ես Յունաստանով:
 Ես յոյնի աղջիկ եմ և այս տեղ բերուած մանուկ
 հասակից: Ագամեմնոնի մասին ի՞նչ գիտես:
 — Ոչինչ չըգիտեմ. խնդրեմ, եթէ կարելի է,
 նրա մասին ոչինչ չըհարցնել:
 — Ինչո՞ւ, խնդրում եմ պատմեցէք ինչ որ նրա
 մասին գիտէք:
 — Նա մեռել է:

— Աստուած ի՛մ, ինչպէս թէ մեռել է:
 — Ինչո՞ւ հուզուեցիր, մի թէ նա քո բարեկամն էր:
 — Սարսափելի է այդպիսի մարդու մահը լսելը:
 — Նա իր կնոջ ձեռնով սպանուեց: Սակայն
 խնդրում եմ նրա մասին այլ ևս ոչինչ չհարցնել:
 — Միայն ասա՛, նրա կինը կենդանի է:
 — Ոչ. նա իր հարազատ որդու ձեռով սպա-
 նուեց, որն իր հօր մահուան համար վրիժառու
 եղաւ:
 — Այդ վարմունքը սարսափելի է, բայց և այն-
 պէս շատ իրաւացի է:
 — Իրաւացի է, սակայն աստուածներին հաճոյ չէ:
 — Թագաւորից յետոյ որդիք մնացել են:
 — Մի հատ աղջիկ, Ելէկտրա անունով:
 — Իսկ թագաւորի որդին կենդանի է:
 — Նա առ այժմ կենդանի է, բայց մարդկան-
 ցից ամենից անբախտն է:
 Երբ Իֆիգէնիան իմացաւ, որ Օրէստը դեռ
 կենդանի է և իր տեսած երազը սուտ էր, նա վճ-
 ուեց առաջուայ ծրագիրը իրագործիլ, դրա համար
 Օրէստին ասաց.
 — Լսիր, քեզ մի բան եմ ուզում առաջարկել,
 որ թէ քեզ և թէ ինձ համար օգտակար է: Եթէ
 քեզ ազատելու լինեմ մահից, արտօք կը ցանկա-
 նաս տանել մի նամակ Արգոս քաղաքը՝ իմ բարե-
 կամին յանձնելու: Այդ նամակը գերիներից մէկն է

գրել, խղճալով ինձ, հասկանալով, որ ոչ թէ ես եմ իրան սպանողը, այլ տեղական օրէնքը: Բայց մինչև այսօր մի այնպիսի մարդ չէ պատահել, որին յանձնէի նամակս Արգոս տանել: Սակայն դու ինչպէս երևում է, ազնիւ ծագում ունիս և միւսնոյն ժամանակ ճանաչում ես նրանց, որոնց կամենում եմ յայտնել, որ ես այստեղ եմ գտնուում: Տար այս նամակը և քո կեանքը, իբրև վարձատրութիւն, կը ներուի. իսկ ընկերդ քո փոխարէն կըզոհուի:

Օրէստը պատասխանեց.

—Շատ լաւ ես ասում, բայց ես չեմ ցանկանում, որ ընկերս իմ փոխարէն զոհուի: Մեր այս ճանապարհորդութիւնն իմ պատճառով է տեղի ունեցել և նա ընկերացել է ինձ, որ ներդրութիւնների և վտանգի ժամանակ օգնէ ինձ: Ուստի իմ կողմից անարդարութիւն կըլինի, որ նա իմ փոխարէն զոհուի, իսկ ես ազատուեմ: Նամակդ ընկերիս յանձնիր. նա կըտանի Արգոս և կըյանձնէ նրան, որին դու ես ցանկանում. հաւատա, որ այսպիսով նպատակիդ կըհասնես: Թող զոհեն ինձ, իսկ ընկերիս ազատեն:

—Քո միտքը շատ գեղեցիկ է և ես կըցանկանայի, որ եղբայրս էլ քեզ պէս լինէր: Յանկացածդ կըկատարուի, նամակս կըյանձնեմ ընկերիդ, իսկ դու կը զոհուես:

Օրէստը հարցրեց, թէ ինչ տեսակ մահով պի-

տի զոհուի:

Նա պատասխանեց, որ զոհերին ինքը չէ զոհում, դրա համար կան առանձին քրմեր. նա միայն զոհերին պատրաստում է զոհաբերութեան համար, իսկ զոհերի մարմինը այրում են:

Երբ Օրէստը ցանկութիւն յայտնեց, որ իր հարազատ քրոջ ձեռքով գերեզմանն յարգուած լինի, Իֆիգէնիան պատասխանեց.

—Այդ անկարելի է, որովհետև քոյրերիցդ ոչ ոք այստեղ չըկայ: Սակայն դու Արգոս քաղաքից լինելով ես ինքս գերեզմանդ ծաղիկներով կըզարդարեմ և աճիւնիդ վրայ անուշահոտ իւղ ու մեղր կըթափեմ:

Իֆիգէնիան հեռանալուց յետոյ Օրէստը Պիլադին ասաց.

—Ինչպէս ես կարծում, Պիլադ, ո՞վ պիտի լինի այս աղջիկը: Նա Տրօայի մասին, Արգոսի, Կալքասի, Աքիլլէսի և ուրիշների մասին շատ բան գիշէ: Ազամեմնոն թագաւորի մասին խօսելու ժամանակ նա արտասուում էր: Պէտք է որ Արգոս քաղաքիցը լինի:

—Զեմ կարծում, պատասխանեց Պիլադը.— այնտեղ Ազամեմնոն թագաւորի հետ պատահած դէպքի մասին համարեա բոլորը գիտեն: Բայց լսիր, ինձ համար ամօթ է, որ քո մահից յետոյ ես կենդանի մնամ: Մարդիկ վատ կարծիք կուսենան իմ

վրայ. նրանք այնպէս կրկարծեն, որ ես ստորաբար մատնել եմ քեզ, կամ թէ սպանել, որպէս զի քրոջդ հետ ամուսնանալով, թագաւորութիւնդ ժառանգեմ: Ո՛չ, միասին պիտի մեռնենք և թող իմ մարմինս քո մարմնի հետ միասին կրակի մատնեն:

Օրէստը չըհամաձայնուեց:

— Իմ պատիժը ես պիտի քաշեմ, ասաց նա: Ինձ համար շատ ամօթ է, որ իմ փոխարէն մի ուրիշը զոհուի, քանի որ դու միշտ պատրաստ ես եղել ինձ օգնելու: Աւելի լաւ է, որ ես մեռնեմ: Գուր բախտաւոր ես, քո օջախը օրհնուած է, իսկ իմն անիծուած: Տուն հասած ժամանակ, խնդրում եմ հետևեալ պատուէրս կատարել. նախ՝ յուշարձան կրկանգնեցնես իմ շիրիմի վրայ և քոյրս թող իր մագերից և արտասունքից զոհ բերէ: Ասա նրան, որ Արգոս քաղաքացի մի աղջիկ ինձ զոհեց: Գուր երբէք քրոջս չըթողնես, միշտ հաւատարիմ մնա նրան: Ի՛նչ մնանք բարեալ, իմ հաւատարիմ ընկեր և ուղեկից. ես մեռնում եմ, ուրեմն Ապոլլոնի նախագգուշութիւնը չը կատարուեց:

Պիլադն երգուեց, որ շիրիմի վրայ յուշարձան կրկանգնացնէ և քրոջը միշտ հաւատարիմ ամուսին կըմնայ. Այդ միջոցին Իֆիգէնիան տախտակի կտորի վրայ գրած նամակը ձեռին վերադարձաւ:

— Ահա այն նամակը, որի մասին մի քիչ առաջ լիշեցի, ասաց նա: Ես դեռ կասկածում եմ ձեզ վրայ. նախ քան նամակս յանձնելը, ցանկալի է, որ երգումով հաւատացնէք նամակս Արգոս տանելու համար,

Օրէստը համաձայնուեց, բայց միևնոյն ժամանակ խնդրեց, որ ինքն ևս երգուէ իրանցից մէկին մահից ազատելու համար:

Իֆիգէնիան Սնահիտի անունով երգուեց, իսկ Պիլադը Ջևսի: Յետոյ Պիլադը Իֆիգէնիայից հարցրեց ինչ պիտի անեմ, երբ ճանապարհին փոթորկի հանդիպեմ, նամակը կորչի, իսկ ես գուցէ մի կերպ ազատուեմ:

Իֆիգէնիան վճռեց, որ նամակը կտրգայ, որպէս զի նամակը կորած ժամանակ կարողանայ նրա բովանդակութիւնը պատմել:

— Ո՛ւմ պիտի տամ, հարցրեց Պիլադը:

— Կըտաս Օրէստին, Ագամեմնոնի որդուն: Այժմ լսիր, թէ ինչ է գրուած այս տախտակի վրայ: «Ես Իֆիգէնիաս, որ Աւլիդայում զոհուել եմ, կենդանի եմ, թէև մեռայ իմ ժողովուրդի համար. ողջոյն եմ ուղարկում»:

— Ո՛րտեղ է Իֆիգէնիան, ընդհատեց Օրէստը: Միթէ մեռածը կրկին յարութիւն է առել:

— Իֆիգէնիան քո առաջ կանգնած է, բայց խնդրեմ չընդմիջել ինձ:

«Չըթողնես, որ օտար աշխարհում մեռնեմ տար ինձ Արգոս, ազատիր ինձ զոհաբերութեան պաշտօնից, միշտ ստիպուած եմ օտարի անմեղ արիւնը թափել»:

Երբ Օրէստը կըհարցնէ, թէ ինչպէս է պա-

տասնել, որ նա կենդանի է մնացել, ասանքն, թէ երբ քուրմը պատրաստուած էր սրով սպանել, Անահիտի կամքով, իմ փոխարէն զոհուեց մի եղնիկ: Քուրմը այդ բանը չընկատեց և բոլորը կարծուած էին, որ ինչ զոհեցին. բայց զիցուհու կամքով ես այստեղ եմ փոխադրուած:

— Ես իմ ուխտս կըկատարեմ, Օրէստ, առ քրոջդ ձեռից նամակը, ասաց Պիլադը:

Քոյր և եղբայր իրար վզով փաթաթուեցան: Իֆիգէնիան միանգամայն զարմացած էր և աշխատուած էր նրա գրկից ազատուել, սակայն Օրէստը ասաց.

Օ, քոյր իմ, մի հեռանար ինչանից, ես քո եղբայրն եմ, որ տեսնել անգամ մտքովս չէր անցնում:

Իֆիգէնիան զեռ կասկածուած էր և որպէս զի քրոջը համոզի բոլորովին, Օրէստը սկսեց պատմել այնպիսի բաներ, որ միայն քոյր և եղբայր կարող են իմանալ: Նա պատմեց Իֆիգէնիայի ձեռքով գործած այն գորգի մասին, որի նկարը ներկայացնում էր Աթէմի և Թիէստի մենամարտութիւնը, մագերի հիւսուածքները, որոնց թողել էր Աւլիզայում ի յիշատակ, և Պիլոպասի նիզակի մասին, որ իր սենեակումն էր պահուած:

Այս բոլոր պատմութիւնը Իֆիգէնիան լսելուց յետոյ հաւատաց, որ իսկապէս զիմացի կանգնածը Օրէստն է, իր մօր փոքր որդին, որ մի ժամանակ

ձեռների վրայ էր պահուած: Նրանք սկսեցին իրար հետ քաղցր զրոյց անել. իրար տեսութեամբ ուրախանալով պատմում էին բոլոր զիպուածները, որ իրարից բաժանուելուց յետոյ պատահել էին: Վերջապէս Պիլադը ասաց.

— Երկար ժամանակով, իրարից բաժանուած քոյր և եղբօր տեսակցութիւնը շատ քաղցր կըլինի, բայց չըպէտքէ մոռանալ, որ պիտի մտածել, թէ ինչ միջոցով կարելի է ազատուել այս բարբարոս աշխարհից:

— Իմ քոյր ելէքտրան ինչպէս է ասլուում, հարցրեց Իֆիգէնիան:

— Նա շուտով կամուսնանայ Պիլադի հետ, որին այստեղ ես տեսնում:

— Բայց քո ընկերն սրտեղացի է, սովքեր են նրա ծնողները:

— Փոկերացի Սարոփիի որդին է. նա մեր բարեկամն է, որովհետեւ մայրը Աբէի աղջիկն է և իմ անձնուէր ընկեր: Օրէստը քրոջը պատմեց Տաւրիդ գալու պատճառը և պատմութիւնը վերջացրեց հետեւեալ խօսքերով.

— Այժմ, օգնիր մեզ, քոյր, այստեղից զիցուհու պատկերը փախցնելու, որովհետեւ նա միայն կարող է բժշկել իմ ցաւը և այն ժամանակ դու միայն կարող ես Արգոս հասնել, թէ չէ ճանապարհին կարող ենք այնպիսի զժբախտութեան

Հանդիպել, որ բոլորս կըդժբախտանանք:

ԻՖիզէնիան երկար մտածելուց յետոյ ասաց. — Այդ գործի յաջողութեան համար երկար մտածեցի: Երկրիս թագաւորին այսպէս կասեմ, թէ այս օտարները սպանել են մօրը, ուստի նախ քան սրանց զօհելը, պիտի ծովի ջրով մաքրուեն. նոյնպէս կաւելացնեմ, որ սրանք զնայչել են զիցուհու պատկերին. նա ևս պիտի ջրով մաքրուի: Իիցուհու պատկերը իմ ձեռով պիտի մաքրեմ, բացի ինձանից ոչ ոք չի կարող նրան մօտենալ: Այսպիսով մենք հնար կուենենանք մօտենալ նաւին: Դու ևս նախօրօք պրտի ամեն բան պատրաստես:

Վերջացնելով խօսքը՝ ԻՖիզէնիան սկսեց Անահիտին աղօթել.

— Ամենազօր զիցուհի, սրանից շատ տարի առաջ դու ինձ Աւլիտայից անվնաս այստեղ փոխադրեցիր. այժմ էլ, թէ ինձ և թէ նրանց, որոնք այս ընկալիս ինձ հետ են, փոխադրիր Յունաստան, որպէս զի քո եղբօր Ապոլլոնի բոլոր մարգարէութիւնները կատարուած լինի: Աղաչում եմ, որ թող տաս քո պատկերը փոխադրել գեղեցիկ Աթէնք քաղաքը:

Այդ ընկալին թոաս թագաւորը եկաւ իմանալու, թէ արդեօք օտարականներին զօհել են, թէ ոչ: ԻՖիզէնիան ասաց, որ ուղարկուած զօհերը անարատ չեն:

— Այդ ինչպէս իմացար, հարցրեց թագաւորը:

— Իիցուհու պատկերը տեղիցը շարժուեց և ձեռներով երեսը ծածկեց:

— Օտարականները ինչ մեղք ունեն:

— Դրանք սպանել են իրանց հարազատ մօրը:

— Ո՛վ, զարմանք: Մինչև անգամ մենք բարբարոսներս այդպիսի բաներ չենք անում: Ի՞նչ ես մտադիր դրանց անելու:

— Նախ զօհելը, հարկաւոր է մաքրել:

— Ծովի, թէ աղբիւրի ջրով:

Ծովի. ծովի ջուրը մարդուս ամեն կեղտերը մաքրում է:

— Շատ լաւ: Ծովը հեռու չէ. այնտեղ, տաճարի մօտն է գտնուում:

— Բայց պէտք է մարդկանցից հեռու տեղ ընտրել:

— Դու գիտես, որտեղ ուզում ես՝ ընտրիր, ես արգելուած գործի մէջ չեմ միջամտիլ:

— Իիցուհու պատկերը նոյնպէս պիտի մաքրել:

— Ի հարկէ, անկասկած, եթէ այդ մայրասպանները ձեռներով պղծել են պատկերը: Լաւ, դրա համար ինչ պիտի անել:

— Պէտք է, գերինների աչքերն ու ձեռները կապած տաճարից դուրս բերել: Պահապանները պիտի ընկերակցեն ինձ: Խիստ հրաման պէտք է արձակուի, որ քաղաքի բոլոր բնակիչները տանից

դուրս չբացան: Եւ դուք տաճարում պիտի մնաք, կրակը մաքրելու համար: Երբ տաճարի մօտով օտարականներ անցնեն՝ գլուխդ հագուստովդ պէտք է ծածկես: Եթէ մենք ուշանաք, վնաս չբկայ, դու հանգիստ եղիր:

—Որքան կամենաս, այնքան ուշացիր, միայն կատարիր այն բոլորը, ինչ որ հարկաւոր է, ասաց թագաւորը:

Իֆիզէնիան առաջ գնաց և քայլերն ուղղեց դէպի այնտեղ, ուր Օրէստի նաւը խարխիս էր ձգած: Օրէստը և Պիլատը, զինուորներով շրջապատուած, հետևում էին Իֆիզէնիային: Երբ քիչ էր մնացել մինչև ծովափ հասնելը, Իֆիզէնիան պահապաններին հրամայեց շղթաների ծայրն իրան տալ, իսկ իրանք մնան այնտեղ, որովհետև նրանք չբպէտքէ տեսնեն, այն բոլորը, իսկ որ օտարականների վրայ պիտի կատարուի:

Սնցաւ բաւական ժամանակ, բայց Իֆիզէնիան չբվերադարձաւ: Պահապանները սկսեցին կասկածել, թէ մի գուցէ օտարականները սպանել են Իֆիզէնիային: Սակայն չէին համարձակուում գնալ ծովի մօտ: Վերջապէս երկար սպասելուց յետոյ վճռեցին, որ բոլորը միասին գնան ծովի մօտ: Հասնելով ծովի մօտ տեսան, որ նաւի խարխիսը բարձրացրել են և մօտ 50 նաւաստիներ առաջ են մղում: Օտարական երկու երիտասարդները կապանքներից

տգատ կանգնած են ծովի մօտ և սպասում են նաւի մօտենալուն: Պահապան զինուորներն այդ բոլորը տեսնելով գոռում-գոչումով յաճրակուեցան նրանց վրայ:

—Ո՞վ էք դուք, ի՞նչու էք տանում մեր քրքր-մուհուն և զիցուհու պատկերը:

Օրէստը պատասխանեց.

—Ես Օրէստն եմ, և իմ քրոջն եմ տանում:

Պահապաններն աւելի խիստ յարձակուեցան նրանց վրայ աշխատում էին Իֆիզէնիային ազատել, բայց նաւաստիները այդ բանը տեսնելով՝ շուտով նաւից օգնութեան հասան: Ո՞չ նաւաստիները և ոչ պահապանները զենքեր չունէին. նրանք բռուցքներով էին կուռում: Նաւաստիները ուժեղ լինելով՝ պահապաններին հալածեցին: Պահապանները նաւից հեռանալով, սկսեցին քարեր արձակել նաւի վրայ:

Օրէստը, Իֆիզէնիային ուսերի վրայ դրած, ծովի մէջ նետուեց և լողալով մօտեցաւ նաւին. Իֆիզէնիան զիցուհու պատկերը ձեռին Օրէստի հետ միասին նստեցին նաւը:

Պիլատը նաւաստիներին խրախուսում էր և նրանք մի ուժով նաւավարում էին նաւը: Քանի որ նաւը նաւահանգստումն էր, բոլորը հանգիստ էին, բայց երբ նրանք մտան արձակ ծովի մէջ, սաստիկ հողմը բարձրացաւ, ծովը ալեկոծուեց և

ալիքները նաև մօտացրին ծովափին:

Պահապանները այդ բանը տեսնելով, իսկոյն վազեցին Թոաս թագաւորի մօտ և պատմեցին բոլոր եղելութիւնը: Թագաւորը իսկոյն և ետ սուրհանդակներ ուղարկեց, որ բոլոր քաղաքացիներին յայտարարեն օտարների և նրանց ընկերների հետ կռուելու համար պատրաստ լինել: Կեռ զօրքը չը հաւաքուած, թագաւորին յանկարծ երևաց Աթէնքի դիցուհին և այսպէս ասաց.

— Թոաս թագաւոր, թող Օրէստին և նրա ընկերներին հալածելու միտքը: Նա Ապոլլոնի հրամանովն է եկել այդտեղ և ես Պուէյգոնին համոզել եմ, որ ծովը մեղմացնէ, որպէս զի նրանք հանդիստ հասնեն իրանց տեղը:

— Ես հպատակուամ եմ քեզ, դիցուհի, պատասխանեց Թոասը. թէև Օրէստը տարաւ իր քրոջը և անահիտի պատկերը՝ բայց ես չպէտք է նրան հալածեմ, որովհետև սատուածների հետ չի կարելի կռուել:

Այսպիսով Օրէստը քրոջ հետ անվտանգ հասաւ, իր հայրենի քաղաքը, ուր սկսեց ապրել հանգիստ, ցաւից բժշկուած, ինչպէս որ Ապոլլոնն էր նախագուշակել:



2976

9.750.10 400.

2013

